

ղովորդեան հոգեւոր պէտքերուն անխոնջ խնամ տարաւ: Բիւշ ետքը Կեսարացիք տեսան որ իրենց առաջնորդը «Քաղկեդոնիկ եւ ուղղափառ» վարդապետութեան հետեւող է, եւ իրենց մէջ մեծ հակառակութիւն յուզուեցաւ իրեն դէմ: Սարգիս Արքեպ. երկու տարիէն՝ 1737ին Կ. Պոլիս մեկնեցաւ ըստ հրամանի Կ. Պոլսոյ Յովհաննէս եւ Երուսաղեմի Գրիգոր Պատրիարքներու, որոնք զինք կանչեցին՝ Յունաց հետ խնդրոյ մ'առթիւ իրենց օգնելու:

Աբրահամ Կաթողիկոսի տուած յիշեալ եպիսկոպոսութեան վկայական կոնդակն, որ Սարգիս Արքեպ. ի մահուանէն ետեւ իւր կենսագրին՝ Յովհ. Վ. Նուրտինեանի քովը կը գրտնուէր, այսօրս կը պահուի Վիեննայի Մխիթարեան Հարց Մատենադարանը (թ. 563, Տաշեան, էջ 1031): Այս երկայն կոնդակն (77 սմ. երկայն 42 սմ. լայն) շատ շքեղ գրուած է եւ երկններանգ մանրանկարներով զարդարուած: Կոնդակին գլուխը դրուած է Աբրահամ Կաթողիկոսի կնիքը, զոր կը բառնան երկու հրեշտակներ: Հոս յառաջ կը բերենք կոնդակին բնագիրն ամբողջ, գլուխը դնելով նաեւ Աբրահամայ կնիքն նմանատիպը ²/₃ պզտիկցուած:

Յամի հաղար եօթն հարիւր եւ երեսներորդ երորդի. Համարողութեան՝ ըստ մեզ մարդացելոյ Բանին. եւ ի հաղար հարիւր. ութսուն երրորդ երորդի թուահաշուութեանս աղինս Արամնի: Յամսեանն նոյեմբերի (ըստ հռոմայեցւոց) երկուց տասանց, եւ մուհնդից: Եւ ըստ հայազնեայցս՝ ի Տրէի, տասն եւ եօթն. Ես՝ Յիսուսի Բրիստոսի